



# ՆԱՅ ՍԿԱՆՈՒՏ

ՕՐԿԱՆ Զ. Մ. Ը. Մ. Բ

ՀԱՒԱԿՔԱԾՈՅ

1919 . 1920 Տ Ա Ր Ա Յ




Յ. Նալբանդյան  
9/9

# ՆԱՅ ՍԿԱՆՈՒՏ

## ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 1

25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1919



316-2000

ԱԳՐԱԿԱՆ

2586

ՄԵՐ ԳՐԱԴԱՓԱՐԱԿԱՆԻԿ

20390-20

Սա վերջին համաշխարհային պատերազմին մենք տեսանք որ Հայն ալ իրեն գէն բաժինը բերաւ և անհաւասար կռիւ մէջ մտաւ երկու հակառակորդ շարք ևս և յաղթանակներ ձեռք բերաւ ևս որքան որ կռիւնեան ստիպուած էր ազգովին և առանց սեռի խտրութեան զիմադրել և խտրադրել իր մարմինն անաւոր և մակերպութեան մը և աներեւանքներու դէմ, և այս բանին համային ուժի պէտք կար և Հայը որ երակներուն և իր հոգիին մէջ այդ գառէ պատնէշներու պէս

տարով շատ մը զոհեր իր շարքերէն, ամբողջ աշխարհ հիացաւ Հայուն տոհմունութեանը և կամքին վրայ և շատ իրաւամբ, որովհետե կարծէք բնութեան օրէնքները վայրկեան մը զարտուղեցան, բնախօսութիւն կոչուած գիտութիւնն իսկ բոպէ մը մնանկացաւ անոր հոգեկան կորովին և կռիւին առաջ, կատարուածը գիտական ու բարոյական ոչ մէկ օրէնքի կը հպատակէր, գիտական ոչ մէկ տուիքով նախատեսուած էր ան. օրերով անօթի և անջուր, օրերով անքուն և տանջանքի ամենասարսափելի ձեւերու մէջ խոշտանգուած միսէ և ոսկորէ կերտուած մարդկային մարմիններ՝ ի՞նչ կ'ըսենք, կանացի և մանկական փափուկ կազմուածքներ զիմ

դրեցին օրերով, ամիսներով և տարիներով. կրանիթն ու պողպատն իսկ կը փշուէր այդ պայմաններու տակ, ուրիշ ու է տակուն կարծուած ազգեր շատոնց պիտի կքէին այս անշափելի ծանրութեան տակ և սակայն Հայը հսկայ ժայռի մը պէս դիմացաւ, կործք տուաւ այս անաւոր փոթորիկին, կարծես թէ ան շինուած էր այն տեսակ նիւթէ մը որ տակուն անծանօթ ըլլար ներկայ աշխարհի գիտուններուն իսկ, Ան իր յոյսով և երկաթէ հաւատքով մը նայուածքը ուղղեց դէպի արշալոյսը, հնգնեց ամէն յոռեատութիւն և իր իտէալովը քողարկեց ամէն ազեղ իրականութիւն և հասաւ հանգրուան մը որ կրնայ վստահօրէն սպասել իր յոյսերու պատկումին:

Չ'օգտուի այսպէս հրաշայի և բիւր անգամ փորձերու ենթարկուած ատաղձէ մը, չօգտուի անոր ֆիզիքական և հոգեկան անբաղդատելի յատկութիւններէն, և չպատրաստել այդ ատաղձէն ապագային համար անմրցելի ազգը, գիտակից օրինապահ քաղաքացին և իր հարեւաններուն յարգանք ազդող ու վստահութիւն ներշնչող գրացին, պիտի ըլլար առնուազն ոճիր:


Հայ Մարմնակրթական ընդհանուր Միութիւնը (Հ. Մ. Ա. Մ.) խոր համոզում գոյացուցած ըլլալով իր ձեռնարկին առաջ բերելիք դրական և բարոյական արդիւնքին կարեւորութեանը վրայ գործի ձեռնարկեց զինադաշարի սկիզբէն և եթէ կազմակերպելով մարմնակրթական և սքառողական խումբեր և գործեց մինչև այսօր կատարեալ հաւատքով որոնց շատ համառօտ մէկ հաշուետուութիւնը կ'ընենք մեր այս թիւին մէջ (Անր Գործը) խորագրին տակ:

Արդ մենք գնահատելով Հայուն տոկունութիւնն ու կորովը կ'ուզենք այդ բարեմասնութիւնները կարգի բերել և խնայողական ձեւով մը կիրարկել որ քիչ ուժով շատ արդիւնք դուրս գայ, որ մեր թուական նուազութիւնը, մեր պակասները դարձանք մնացածներուն հոգեկան և մարմնական ու ժերու օրինաւոր տեսնումովը, պատրաստենք անհատներ որոնք կարող ըլլան ապագայ քաղաքակիրթ աշխարհի հարուածներուն դիմագրաւելու, մրցումներու կուրծք տալու:

Մենք Հայերս դարերով անխախտ կեանքով մը ապրելով վարժուած ենք կամայականութեան և անհաւասարակչութեան որով կը լրջանանք շարաշար տուժել մեր այդ թերութիւններուն երեսէն և ձեռովէն անցնելով գետի մէջ խեղդուիլ:

Մենք հաւատք չունինք զուտ բարոյքարողներու վրայ երբ անոնց չընկերակար ԳիՄԸ. մենք կ'ուզենք հաստատուն հիմերու վրէնել մեր ազգային նկարագիրը կ'ուզենք պարաստել օրինապահ բայց ոչ սարուկ մարդ տալ անոր առողջ և կորովի մարմինը և ուղղատ միտքը, ջնջել անոր մէջէն գձութիւնը, եսասիրութեան ու զոռոզութեան դերը և անոր տեղ դնել շիտակ և անշեղ նրազիրը, ձերբադատել քաղաքակրթութեան սակարարած կարգ մը թոյններէն ու տալ անբնութեան օրինակը և օրէնքը. ընտելանց զինք բնութեան և սորվեցնել անոր քաղաքակրթութիւնը հաշտեցնել բնութեան անտեղիտալ օրէնքներուն հետ, պատրաստել այրասիր ազաւարդը, ազնիւ հպարտութիւն մը տալ անտիպականկատ ընել զայն առանց կեղծաւոր ըլլալու, չը սակարկող ուղղամտութիւն մը դն անոր մէջ:

Մենք այս ամէնը կ'սպասենք մեր սկստեսակ կրթութենէն և իրաւունք ալ ունինք մենք փորձերը տեսանք և կը տեսնենք ամօր սկստեսութիւնը մոգական գաւազան մը որ հրաշքներ կը գործէ և պիտի գործէ տակաւորով հետեւ բարոյական խրատները փոխանակ խօսքերով աւանդելու գործնականօրէն ցոյտուի պատանիներուն, մեր դպրոցը բնութեան ծոցէ, մեր ուսուցիչները բնութեան տեսաներն են, հոն պատանիին հոգին կը մաքրուի իր ժանգելէն. թո՛ւրք կ'առնէ և կը ձգտուի դէպի բարձրը, առողջ նրբութիւն մը կ'ստանայ իր հոգին իսկ մարմինը մաքուրօղի, արեւ ճառագայթներու և ծաղիկներու բոյրերու լողանքին մէջ կ'ուսանայ և ընդունակութիւն կ'որ կ'ստանայ բարձր հոգիի մը հրամանները զի ծաղրելու համար, հոգին ու մարմինը կրն համերաշխիլ միայն բնութեան ծոցի մեջ գեղեցիկ տեսարաններու առջեւ հոն պատանին ու նրա տարէցը զօրաւոր կերպով ազդեցութիւն կրեն բնութեան տեսարաններուն ու տա ժայռերը հոգիին վրայ կը դրօշմեն իտութիւնը և կորով կը ծնցնեն պակասակալ ծառերը սլացք կուտան մտքու մին, խորունկ ձորերը խորհող կը մատակարարեն անոր. իսկ ծաղաղ տեսքը կուգայ քնքուշութեամբ:



Սկստեսակալ զատարակուի

իակողմանի ըլլալ և պատանեկութիւնը կիսա-  
վայրենիներու պէս թափաօեցնել լեռ ու սար,  
ան պիտի կազմէ քաղաքի մարդը, ընկերու-  
թեան մարդը տալով անոր քաղաքակրթութեան  
օգտակար կողմերէն օգտուելու ամէն միջոց:  
Հայ սկստուոր յարգանք և վստահութիւն պէտք  
է ներշնչէ նոյնիսկ իր թշնամիին, անոր ներկա  
յութիւնը ու է տեղ քաջայերանք և ապահո-  
վութիւն պէտք է ազդէ շուրջիններուն, ուր  
տխրութիւն կայ հոն ժպիտ և յոյս պէտք է  
սփռէ ան վերջապէս ան ըլլայ շարսեսն եւ յու-  
սադրող, գործնական վստահելի եւ կարգապահ  
անհասր որուն կարենաս յանձնուիլ և յանձնել  
հայրենիքի շահերը իբր ամենակորովի քաղա-  
քացին:

Եւ այս նպատակին հասնելու համար մենք  
կեցած ենք անխառնական հողի վրայ, անկախ յա-  
րսնուանական եւ կուսակցական նկատումներէ,  
մեզի հաւսար աժիֆ ունի անէն անհաս ինչ յարսն-  
ուանութեան եւ ինչ կուսակցութեան աչ պահանքի,  
մեկ պաշտօնապէս ու եւ կուսակցութեան չեմք  
յարած, մեր կազմակերպութիւնը հաւաքաբար  
չզբաղիր քաղաքայինութիւնով իսկ անդամնե-  
րը անջատաբար աչ ստեն իրենց համազումներուն  
մէջ. մեր դռնէն ներս կը դադրի ամէն կողմնա-  
կալութիւն և կուսակցական ու կրօնական խը-

տիր և մենք միազանգուած կ'ընթանանք մեր  
խոնարհին ընդ առաջ:

Մեր ծրագիրը վաւերացուած է Ազգային  
կեդրոնական վարչութենէն և կը վայելէ ազգին  
ու մերուն հովանաւորութիւնը ինչպէս Ազգային  
և Անհատական վարժարաններու վարչութիւն-  
ներու համակրանքը մեզի հետ է որ մեզի հա-  
մար բարոյական քաջայերանք մըն է առ այժմ  
որմէ քաջայերուած ներս պիտի մտնենք դպրոց-  
ներէն հոն պատրաստելու համար առողջ պա-  
տանեկութիւն մը — արդէն մի քանի անհատա-  
կան և թաղային վարժարաններ կապուած են  
մեզի հետ թէ սկստուարական կազմակերպութիւնով  
թէ մարմնամարզական դասերով —, պիտի թա-  
փանցենք ժողովրդական խաւերու մէջ արթն-  
ցնելով տարեց երիտասարդութեան մէջ սքորի  
և աթլէթիք խաղերու ճաշակը իրենց պարագոյ  
ժամերը օգտակար կերպով անցնելու և իրենց  
մարմնական կորովը պահելու սատարելու համար,  
պիտի թափանցենք տուներէն ներս կազմակեր-  
պելու առողջապահիկ, պարզ և հաճոյք, ապ-  
րելակերպը վերջապէս մեր գաղափարականն է  
պատրաստել ԱՌՈՂՋ ՍԵՐՈՒՆԻ ՄԸ ՆՈՐ ՀԱՅ-  
ՐԵՆԻՔԻՆ համար:

Հ. Մ. Ը. Մ.  
Կ. Ի. Ն. Ս.



Ա. Ա. Բ. Է. Լ. Ն. Ս.

Մ. Ը. Մ. Ի. Յ. Գ. Բ. Է. Լ. Ն. Ս. Մասնաճիւղին Ուղիմախական խաղերու մէջ Ա. Մրցանակով Շամբիոն

տա  
ցնէի  
ժաղի  
րով  
խուճը  
նուագ  
ժողովրդ  
կին ա  
մը ան

ՊԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ,  
ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

ՀԱՄԱՐ 1454

Հեռագրային թիւ 1328

ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՊԱՏ. ՄԻՈՒԹԵԱՆ  
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Սրաի մեծ բերկրութեամբ կարգացի Ձեր Յունիս 12 թ. գեղեցիկ գրութիւնը, ուր խտացուցած էիք Ձեր բիւրեղ սիրտերու և շուշան հոգիներու ծնունդ եղող մաքուր զգացումները: Ձեր Միութիւնը անոր համար աւելի մօտիկ է սրտիս, վասն զի Դուք կ'խորհրդանշէք ապագայ Հայութիւնը իր մաքրակենցաղ, առոյգ և կենսունակ պատկերով: Հայ ցեղը թէև ի բնէ լաւ յատկութիւններով օժտուած, սակայն դարերու ընթացքին մէջ ստրկութեան շղթայներէն ազդուած՝ սակաւ ինչ արատներ կ'կրէ իր Ֆիզիքս կան ու բարոյական դիմագծութեան վրայ: Արդի և յաջորդ սերունդներուն գործն է ուժեղացնել, բարձրացնել ցեղին Ֆիզիքս կան, բարոյական և մտաւորական ընտիր յատկութիւնները, մարդելով իրենց մարմինն ու նկարագիրը: Դուք, սիրելի Հայ Արիներս, Դուք Հայրենիքի յոյսն ու լոյսն էք, Ձեր բարեսիրական զինուորագրութիւնը գործունէութեան լայն ու գեղեցիկ դաշտ մը ունի իր առջեւ: Կազմակերպուեցէք, ազնուացէք, բարձրացէք որքան կրնաք, լեցուցէք Ձեր սիրտն ու միտքը, վասն զի Դուք պիտի լաք վաղուան սրբազան Հայրենիքին հրաշակերտ տաճարին սիւնները:


Եւ ես իմ Հայրական սրտաբուղիս մաղթանքներով կ'ընկալմ Ձեր սիրելի Միութիւնը, հայցելով Աստուծոյ հովանաւոր Ձեր բարենպատակ գործերուն և ջանքերուն վրայ:

Աղօթարս  
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅ  
ՉԱԻԷՆ ԱՐՔԵՐ

ՖՐԱՆՍ. ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԻՆ

ՀԱՅ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ

Փ Ա Ռ Ա Յ Ե Ղ Ջ Ա Հ Ա Գ Ն Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը



Առանց վարանելու կարելի է բայ թէ՛ ֆրանսական ազգային տօնին առթիւ, Պոլսոյ մէջ կատարուած ցոյցերուն ամէնէն փայլուններէն եղաւ հայ սկառուներու կազմակերպած ջահագնացութիւնը:

Ժա՛րը 3 ու կէսին 200ի չափ հայ սկառուներ Բերայի ակումբի մարզավայրէն ճամբայ ելան դէպի ֆրանսական դեսպանատունը, առաջնորդութեամբ իրենց պետին Պ. Գրիգոր Յակոբեանի և Հայկ Ճիզմէճեանի: Ամէնքն ալ կանոնաւոր հագուած, ամերիկեան ձեւի ճերմակ գտակներով և անթերի կարգապահութեամբ անցան Բերայի մայթերէն. առջեւէն կ'երթար Քնար Ֆանֆառի խումբը, նոյնպէս կանոնաւոր և միատեսակ համազգեստով. հնչեցնելով հայկական և եւրոպական եղանակներ. ինչպէս «Մարսէյէզ», «Մատրլօն», «Լուսին Չկար», «Մշակ Բանուոր» և ըն. իւրաքանչիւր՝ ութնեակի մէջ կային ջահակիրներ. իսկ մէջտեղէն հայ սկառուի մը կուրծքէն վեր բայ ճրացած ձողի մը վրայ խրոխտօրէն կը ծածանէր հայկական դրօշակ մը:

Սոււմբը առաջին անգամ կանգ առաւ Թաքսիմ, ֆրանսական ծովային հիւանդանոցին առջեւը, ուր նուագախումբը նուագեց «Մարսէյէզ» և «Մշակ քանուոր» և արժանացաւ ֆրանսացի սպաներու և զինուորներու խիստ սիրալիր ընդունելութեանը. որոնք կ'աղաղակէին «կեցցէ Հայաստան, կեցցէ Ֆրանսա»:

Յունական Ակումբին առջև նուագեց հելլենական քայլերգը մինչ Յոյները «կեցցէ Հայաստան և Յունաստան» աղաղակներով կը թնդացնէին օդը. Բումբի փասափին մօտ հայ տուններէ ծաղիկներ թափեցին խումբին վրայ և կեցցէներով և ծափահարութիւններով հարկադրեցին խումբը կանգ առնելու հոն: Այնտեղ դարձեալ նուագեցին «Բամբ Որոտան» և «Մարսէյէզ»: Սոււմբը կեցաւ նաև Պ. Թօքաթիանի պանդոկին առջև որ դժբախտաբար հայկական դրօշակ մը անգամ չունէր պարզած իր հաստատութեան

վրայ: Վերջապէս հայ սկառուները մօտեցան ֆրանսական դեսպանատան, յերս մտաւ շրջափակը. վերին քօմիսէրին յանձնեցին գեղեցիկ ծաղկեփունջ մը որուն վրայ գրուած էր. «Հայ սկառուներու կազմակերպութիւնը կը մասնակցի Ֆրանսական ցեմտրեան և կը ներկայացնէ իր յարգանքը, Ֆրանսական Մեծ Ազգին, իրենց ազգային տօնին առթիւ»: Նուագախումբը նուագեց «Մարսէյէզ»ը:

Ֆրանսական վերին քօմիսէր Պ. Տըֆրանս ներկայացաւ իր հետևորդներով և կարճ ճառով մը իր շնորհակալութիւնը յայտնեց: Ապա Հայ Սկառուները տողանցք մը կատարելով մեկնեցան դեսպանատունէն, մինչ նուագախումբը սկսած էր նուագել «Մշակ Բանուոր»ը:

Վերադարձը աւելի եւս փառաւոր եղաւ: Հայկական թափօր մը ձեւացած էր այն հետաքրքիրներու բազմութենէն որ ամէն կողմէ շրջապատած էր հայ սկառուներու խումբը: Կալաթա Սէրային առջև խումբին ի պատիւ հրավառութիւններ կատարուեցաւ, և սկառուները պահ մը ողողուեցան գոյնզգոյն գեղեցիկ լոյսերով:

Սկառուներու խումբը Պրուսա փողոցը մտնելով կեցաւ Պատրիարքարանի դրան առջեւը և նուագախումբը երգեց «Բամբ Որոտան»: Ֆրանսական հիւանդանոցին առջեւը կրկին անգամ կեցաւ խումբը և նուագախումբը երգեց Մարսէյէզը մինչ հայ սկառուները ամէնքնին մէկ յարգանքի բարեւ կուտային իրենց գլխարկները փայտերուն ծայրը անցուցած դէպի վեր երկարցնելով, Ամէն կողմէ կը լսուէին ծափ ու հուռաններ: Սանդավառութիւնը աննկարագրելի էր:

Օտարականները և Բերայի հասարակութիւնը վարժուած չըլլալով Հայոց կողմէ այդ տեսակ օրինակելի և խիստ կանոնաւոր ձեռնարկի մը, երբ կը նայէին հայկական դրօշին զարմացումով կը համոզուէին թէ Հայեր են անոնք: Իսկ ամէն մէկ հայ որ կը լսէր իր հայրենի երգը և

# ԱԹԼԷԹ ԸԼԼԱԼՈՒ ՇԱՄԱՐ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՍԿՍԻԼ ԵՒ Ի՞ՆՉ ՊԷՏՔ Է ԸՆԵԼ

ԸՆԴՀ. ԳԱՂԱՓԱՐ ՄԸ

կը տեսէր իր արեւակից կտրիճներու վսեմ տողանցքը, սիրտը կ'ուռէր և կը փղձկէր: Շատեր յարգանքի համար գլխարկնին հանած՝ կուլային: Լսեցի ձերուներ մը որ արցունքներու մէջէն կը հեկեկար «Փառք քեզ, Աստուած, որ այս օրն ալ տեսանք» ուրիշ մը. «68 տարեկան էի, բայց այսօր 25 տարեկան եղայ» կ'ըսէր:

Ուշ էր արդէն երբ հայ սկաութներու խումբը հասաւ մարզարանը, ուր մասնաւոր վրաններ ունէին պատրաստած գիշերելու համար:

Ի նշան համակրանքի արտայայտութեան, հետեւել նուիրատուութիւնը եղաւ Սկաութներու Միութեան Պ. Պ. Զարեհ Խորասանճեան 100, Ծրուանդ Գասպարեան 50, Վրթանէս Մարտիկեան 25, Միհրան Ազարեան 20, Վ. Շիմլիբեան 50, Ոմն 10, Թումիկ Կեսարեան 5, Թօգաթլը 36 1/2 և Յ. Օհանեան 5 ոսկի:

Ճակատամարտ ՈՒՂՆԵԿՑ

Այս առթիւ ֆրանսական վերին գումիսերութենէ մեր ստացած նամակը նոյնութեամբ կը հրատարակենք այս թիւին մէջ:

Հ. Մ. Ը. Մ.

HAUT COMMISSARIAT  
DE LA  
RÉPUBLIQUE FRANÇAISE  
Service Politique

Paris, le 16 Juillet 1919

*Le Haut Commissaire de la République, très touché des félicitations que l'Organisation des Boy-Scouts Arméniens a bien voulu lui adresser à l'occasion de la Fête Nationale du 14 Juillet, la prie d'agréer ses remerciements.*

L. S.



Աթլէթիքին ո եւ է մէկ ճիւղին մէջ մարզուելու համար, այսինքն բարձրութիւն ցատկել, վազել, ցողով բարձր ցատկել, սկաւտակ նետել և այլն. պէտք է նախ բժշկական քննութենէ մը անցնել. ամբողջ մարմնոյ գործարաններուն ինչպէս ըլլալը հասկնալու և ըստ այնմ շարժելու համար եթէ ո եւ է տկարութիւն չունի պէտք է մարմինը աւելի առողջացնելու և ուժովցնելու մարզանքներ ընէ որ կարողանայ յոգնեցուցիչ կամ ծանր խաղերու մասնակցիլ առանց իր առողջութեան վնաս հասցնելու: Բայց այս ըսելով պէտք չէ հասկնալ որ տկարները մարզանք չեն կրնար ընել և ոեւէ խաղի չեն կրնար մասնակցիլ, անոնք ալ լաւ մարդիչի մը ձեռքին տակ կրնան իրենց տկար գործարաններուն նամանաւանդ սիրտը և թոքերը առողջացնելու և զօրացնելու փորձեր ընել եւ այնպէս շարունակել և մարմինը լաւ մը առողջացնելէ և ուժովցնելէ վերջ է որ կրնան ո եւ է խաղի մարզուելու սկսիլ: Աթլէթիքի սկսելու համար պէտք է առնուազն 16 տարեկան ըլլալ որովհետև մինչև այդ տարիքը տղան ֆիզիքապէս լաւ մը չի կազմուիր (բացառութիւններն հալուազիւտ են) և աթլէթիքի ծանր փորձերուն չի կրնար տակալ որով իր առողջութեան կը վնասէ, այդ տարիքէն վերջն է որ մարմինը աւելի շատ կ'աճի և ջիղերը կ'սկսին աւելի զօրանալ, մինչեւ այդ տարիքը պէտք է շուտաւանական մարզանքներ, շնչառութեան փորձեր եւլն. ընել մարմինը լաւ կազմելու և պատրաստելու համար: Աթլէթիքի մարզուելու համար պէտք է նախ սիրտը թոքերը զօրացնել նամանաւանդ սիրտը, որովհետև մարզանքի ո եւ է ճիւղին մէջ սիրտն է ամէնէն աւելի ազդուողը: 100 եարտա վազէ և պիտի տեսնես որ սիրտդ մեկնած ատենէդ շատ աւելի արագ կը զարնէ ասոր պատճառը արեան ամբողջ մարմնոյ մէջ շատ աւելի արագ շրջան ընելն է, ուստի աթլէթ մը նամանաւանդ վազելու մասնակցողները պէտք է զօրաւոր սիրտ և թոքեր ունենան և ամբողջ մարմնով զօրաւոր ըլլան այսինքն մէջք, կուրծք, կոնակ, սրունք եւլն. զօրացնեն ասոնք զօրացնելու համար պէտք է շուտաւանական և շնչառութեան մարզանքներ թեթեւ վազելներ՝ քիթէն

# ՄԵՐ ԳՈՐԾԸ

1 Նոյ. 1918 — 1 Հոկտ. 1919

ձեռնով և այլ մարզանքներ ընել և առողջապահական ամէն օրէնքներուն հնազադիլ. օրինակ՝ ըր երեք անգամ պէտք է ուտել և աստուց մէջերը նաւ պէտք չէ խառնիխուռն բաներով ստամոքսը ծանրաբեռնել որովհետեւ մարսողութիւնը կը խանգարեն և ստամոքսը կը տկարացնեն, առաւօտուն լաւ նախաճաշ մը այսինքն հաւկիթ, պանիր, մի քիչ կարագ կաթ և լաւ հաց, ցերեկին թիթեւ ճաշ մը և իրիկունը չտիտար ճաշ մը, ճաշի ատեն ջուր խմելը լաւ է բայց վերջը պէտք չէ խմել գիթ 2 ժամ անցնելու է ալբոլ և սիկառ ընաւ չգործածել, ձիւնով թոքերէն աւելի սիրան է որ կ'ազդուի ծխողի մը սիրտը քննեցէք և պիտի տեսնէք որ աւելի արագ եւ տարբեր ձեւով կը զարնէ ու սառն անխելի մը ընաւ պէտք չէ ծիւծ նամանաւանդ վազողները միշտ մաքուր օդի մէջ պէտք է ապրին, ընաւ իրական սեռի վրայ չմտածել և միաքէն գէշ բաներ չանցնել և միշտ գիջութենէ հեռու մնալ պէտք է, շատ կարեւոր է նաև քունը, անխելի մը պէտք է 8էն 10 ժամ քնանայ և միշտ միեւնոյն ժամուն, կարծր անկողնի և աջ կողմի վրայ պառկել առաւօտուն արթննալուն մէկէն շիկի այլ 5/10 վայրկեան արթուն պառկելէ վերջ, միշտ մաքուր ըլլալ և ամէն մարզանքէ վերջ գաղձ կամ պաղ ջուրով տուչ առնել կամ սպունքով սրբուելէ յետոյ մարմինը լաւ մը շփել, այսպէս շարունակելով մարմինը լաւ մը կ'ազմելէ վերջ եթէ կուզենք ու է անխելիք խաղի համար մարզուիլ և մրցումի մասնակցելու չափ առաջ երթալ պէտք է մենք մեզի հետեւեալ հարցումները ընենք: 1. Մարզուելու դասը թացքին տոկայու ուժը ունի՞մ: 2. Կանոնաւորաբար մարզուելու և յարատեւելու կամք ունի՞մ: 3. Ի՞նչ տեսակ և ո՞րչափ փորձերու պէտք ունի՞մ: 4. Մարզուիլ սկսելէ առաջ մարմնոյս ու է կողմը մարզելու պէտք աւնի՞մ: 5. Ի՞նչ խաղի համար պէտք է մարզուիմ: 6. Կարելի՞ է մէկ անգամէն մէկէ աւելի խաղելու մէջ մարզուիլ: 7. Խաղերը փորձելու ամէնէն յարմար ժամանակը ե՞րբ է: 8. Ի վիճակի ըլլալու համար որչափ ժամանակի պէտք ունի՞մ: 9. Ու է սովորութիւն ունի՞մ որ պէտք է դադարեցնեմ: Այս հարցումները ընելէ և որ խաղը քեզի յարմար գալը որոշելէ կամ հասկնալէ վերջ պէտք է վարժ անխելիք ձեռքին տակ մարզուիս և ըսածները ճշտութեամբ կատարես, իսկ եթէ մտիկ չ'ընելով և շուտով յառաջդիւնելու փափաքով շատ փորձես այն ատեն ջրղերու կարծրութիւն մը յառաջ կը բերես որով յառաջ երթալու տեղ ետ կը մնաս: Շատ մը կարող անխելիներու մրցումի ատեն անյաջող ելլելուն պատճառը մարզանքի մէջ չափազանցած ըլլալնին է: Այսչափը միայն ընդհանուր գաղափար մը ժալու համար է յաջորդ թիւով մենք պիտի տանք իւրաքանչիւր խաղի համար մարզուելու մանրամասն սխաղէմը:

Զինադադարի առաջին օրերուն երբ Հայութիւնը արիւնի մկրտութենէն տակաւին նոր դուրս էր եկեր, իր շղթաներուն կղպանքները հազիւ քակուած, խուճք մը երիտասարդներ հաւաքուեցանք Պ. Գրիգոր Յակոբեանի կոչին վրայ, կազմելու համար ՀԱՅ ՄԱՐՄԻԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ (Հ. Մ. Ը. Մ.): Առաջին նիստը գումարուեցաւ 1 Նոյեմբեր 1918 ինը հոգիի ներկայութիւնով որոնք հրաշքով մը աւերի ճիրաններէն դուրս մնացած էին և որ նախկին սիրահարներ ու մասնագէտներ էին մարզանքի և սքօրի կեանքին: Այս Ա. ժողովին մէջ որոշուեցաւ լայն և պարզ ծրագիրով



† Նահապետ ԾԱԽԱՐՇ ԻՐԻՍՅԱՆ

Մարզանքը Հայերու մէջ ժողովողականացնող, «Մարտնամարտ» թերթի հիմնադիր եւ անդուն հայորդի որ Այս աքսորուելով զո՞հ գնաց հայաջինջ մոլուցքին:

մը սկսիլ Մարմնակրթանքի գործը և զայն մտցնել մասնաւորապէս դպրոցներէ և հիմնելի որբանոցներէն ներս:

Այս ժողովին մէջ մենք որոշեցինք ԽՕՄՔԷՆ ԱԻՆԼԻ ԳՈՐԾ ՑՈՅՑ ՏԱԼ ԱՌԱՆՑ ԱՂՄՈՒԿԻ որով մեր ուշադրութեան գլխաւոր առարկան եղաւ կազմակերպել սկառտական խումբեր քաջ գիտնալով որ մեր պատանիներուն շատ աւելի կարեւոր էր այս՝ զանոնք մարզելու համար մարմինով և հոգիով, և քիչ ատենի մէջ զգալի թիւ մը ունեցանք այս ուղիով: Առաջին պատեհութիւնով Ղալաթիոյ եկեղեցւոյ շրջափակին և Սկիւտարի մէջ հիմնեցինք առաջին ձրի դեղարանը և շարժուն հիւանդանոցը, սկառտներ յատկացուցինք այս գործին համար, աշխա-



տանքի բաժանման և կարգապահութեան մասին մեր ձեռքէն եկածը ըրինք և այս գործը տեւեց 2 ամիս որու միջոցին 1500ի մօտ գաղթական և կարօտ հիւանդներ խնամեցինք որոնցմէ վիայն երկու զոհ տուիմք պարզ այն պատճառով որ հիւանդները մեր ձեռքը հասան մահամերձ վիճակի մէջ: Մեր այս ձեռնարկին մէջ ազնուօրէն մեզի աջակցեցան մեր հայ բժիշկներէն մի քանիները: Հայ կարմիր Սաչի հաստատումով մեր այս գործէն ետ քաջուեցանք և սակայն մենք պարապ չը կեցանք նորէն, Սկիւտարի մէջ սկաուտները կալուածատիրոջ թոյլտուութիւնով չորցած ծառեր կտրեցին բերին տարագրելոց կայանին իրր ձմեռուան վառելիք, օգնեցին որբահաւաքներու և որբերու տեղափոխութեան, Գուրու Չէչմէի և այլ տեղերու հրդեհներուն անձնուիրարար ձեռնտուեցին, հանրային հանդէսներու առեն կարգապահութեան հակեցին և կատարեցին տակաւին այնպէս ծառայութիւններ որոնց հրապարակումին կուզենք ժլատ ըլլալ:

Ասոնցմէ դուրս Յուլիս 14ին Ֆրասական Ազգային տօնին առթիւ սարքուած սկաուտական ջահագնացութիւնները եկան ամբողջ քաղաքակիրթ աշխարհի տալու հայուն կենսունակութեան գոհար նմոյշը, Տիւրքիոյ ծայրայեղ յարմարութիւնը և քաղաքակիրթութեան բարձրագոյն աստիճանի հասնելու ընդունակութիւնը, այդ ցոյցը ամենամեծ ապտակն էր տրուած մեր թշնամիներուն երեսին, քաղաքակիրթ վրիժառութիւն մըն էր այն որուն համար մենք ընդունեցանք դրական և բարոյական զնահատութիւններ: Վերջին 31 Օգոստոսի տեղի ունեցած Տարեկան Ողիւնկիական խաղերու տպաւորութիւնը տակաւին թարմ է ամէնուն սրտին ու մտքին մէջ, հոն մեր մարզիկները ցոյց տուին հայ մկաններու անժանգոտելի և անսկարանալի կորովը սամանելի շղթայումներէ իսկ վերջ եւ իրական զնահատումի արժանացան օտար զինուորական պետերու և ուրիշ սիւլիլ անձնաւորութիւններու կողմէ:

Պոլսոյ գրեթէ բոլոր թաղերու և շրջակայ մի քանի գաւառներու մէջ 25ի մօտ մասնաճիւղեր հաստատած ենք և օրէ օր նոր զիմուաներ կ'ըլլան նոր մասնաճիւղերու համար: Հիւնսած ենք տասնէ աւելի մարզարաններ, կաշմակերպած ենթ ժուր պօլի մրցումներ օտարներու հետ, քեմիսի, պասիք պօլի և դաշտային խաղերու խաղարաններ ուր երիտասարդութիւնը կրթիչ ու մաքուր ժամանցներ ունեցած է դուրս գալով սրճարաններու և գինետուններու ապականիչ մթնոլորտէն:

Սկաուտական զբօսական պտոյտները և շուէտական մարզանքը շատ լաւ արդիւնք տուած են ֆիզիզական և բարոյական տեսակէտով, մեր շարքերու մէջ մտած են տկարակազմ և գունատ պատանիներ որոնք իրենց ծնողաց մտահոգութիւնն էին, այսօր հպարտօրէն կ'ըլլ-



**Պ. ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲՅԱՆ**

Հ. Մ. Ը. Մ. ի հիմադիր անդամ և Սկաուտ Պետ Մասնազէտ Մարզիկ

Նանք ըսել որ ասոնք քաջաոռով վիճակ մը ցոյց կուտան ի մեծ միխթարութիւն իրենց ընտանիքներուն և օրէ օր աւելի կը շնչտուի իրենց ֆիզիքական և հոգեկան յառաջդիմութիւնը: Կային ուրիշներ ալ որոնց մէջ կար իրնէ վարելու և առաջնորդելու ձիրքեր և սակայն սուիթ չէին գտած յայտաշերելու, ասոնք ալ պտոյտներու և մարզանքներու միջոցին ապարէզ գտան իրենց արժանիքը ցոյց տալու և զարգացնելու:

Հոն ուր միութիւնս մասնաճիւղ ունէր տեղին որբանոցներուն մարզանքի դասերը իր վրայ առաւ և կամ այցելու ուսուցիչներ կարգեց, որբերէն շատերուն մարմինը և անդամները որ

# ԱՂՋԻԿ ՍԿԱՌԻՏՆԵՐ

չարաչար աշխատանքի պատճառով այլանդակ-  
ուած էին մեր լուրջ ուշադրութեան առարկայ  
դարձան:

## Ամենուն մեկ պատասխան

Այս դրական դորձերու շարքին կայ և բա-  
րոյական գործը: Սկաուտի շարքերուն մէջ առ-  
նուեցան այնպէս թիփեր որոնց վրայ ուրիշներ  
անուղղայ պիտակը պիտի փակցնէն, ասոնք այ-  
սօր յուսալի պատանիներ դարձած և ամէն  
գուրգուրանքի արժանի են: Մնողքներ թէ բե-  
րանացի և թէ գրաւոր իրենց գոհունակու-  
թիւնը յայտնած են մեզի իրենց զաւակներու  
բարքերուն մէջ դէպի լաւը շօշափելի արդիւնք-  
ներ տեսած ըլլանուն համար և մեզ ամէն օր  
նոր դիմումներ կ'ըլլան ծնողքներու կողմէ որ  
իրենց զաւակները սկաուտ արձանագրենք:

Մենք մուտքի դրամ և անգամաւճար  
չենք առած կարօտներէն և անոնց հազուատներն  
ալ մեր կողմէ ձրիօրէն կամ եղած նուիրատու-  
ութիւններէն հայթայթած ենք:

Փաւառներէն մեր մասնաճիւղերէն եկած  
լուրերն ալ ոգեւորիչ են ճոն ևս կը սարքեն  
մրցումներ և խաղեր որոնք յոյս և քաջայերանք  
կուտան տարս գրութենէ վերադարձած բեկոր-  
ներուն:

Չենք ըսեր թէ բոլորովին անթերի է մեր գոր-  
ծը և կատարելութեան տիպարներ են մեր սկա-  
ուտները և անդամները, կան և կրնան անպա-  
տեհութիւններ կենալ սակայն երբ նկատի առ-  
նուի կարճ ժամանակամիջոցը և մեր ուժերուն  
անբաւականութիւնը արդիւնքը ինքնին շատ  
մեծ է որովհետեւ առանց ու է է նիւթական օգ-  
նութեան զուտ մեր բարոյական ուժին վստա-  
հելով սկսանք և այսօր տակաւին միջոցներու  
անբաւականութիւնը կայ որուն կրնան ապաս-  
տանիլ մեր պգտիլ թերութիւնները և մենք  
քաջայերուած Ազգին և ազգային անխնդիր  
ամէն կազմակերպութիւններուն մեզի հանդէպ  
ցոյց տուած համակրանքէն և զրկարաց ընդու-  
նելութիւնէն նոր ուժ և կորով կ'առնենք աւելի  
լայն քայլեր առնելու դէպի առաջ մեր ազգա-  
յին վերածնունդի արշալոյսը առողջ և պող-  
պատէ սերունդով մը դիմաւորելու համար:

Հ. Մ. Ը. Մ.

*Կ. Ռ. Ղուկաս*

Ատենէ մը ի վեր թերթերու մէջ խնդրոյ  
նիւթ եղաւ Աղջիկ Սկաուտներու կազմակեր-  
պութիւնը, թեր ու դէմ կարծիքներ յայտ-  
նուեցան որոնցմէ յայտնի էր որ դժբաղդարար  
երկու կողմերն ալ խնդիրը չէին ուսումնասի-  
րած և ենթադրական վտանգի մը դէմ կռի-  
կը մղէին, կը ցաւինք դիտել տալ որ ոչ ոք  
միտք ըրաւ գոնէ Հ. Մ. Ը. Միութեան դիմե-  
լով լուսաբանութիւն առնել այս նուրբ և կեն-  
սական խնդրին վրայ, պայքարը կը շարունակ-  
ուի տակաւին անտեղի կերպով:

Հ. Մ. Ը. Միութիւնը հրապարակաւ չ'ու-  
զեց արտայայտուիլ այս մասին վաղահաս նկա-  
տելով զայն:

Եղածը պարզ նախափորձ մըն է և չ'արժեր  
մտահոգութիւնը: Իսկ ինչ կը վերաբերի յառա-  
ջիկային այդ ուղղութիւնով առնուելիք քայլին  
կուզանք պաշտօնապէս յայտարարել որ Հ. Մ. Ը.  
Միութիւնը լրջօրէն նկատի առնելով խնդիրը  
իր մէջէն ձեռնհասներուն պաշտօն յանձնած է  
ուսումնասիրել Եւրոպական Կրլ կայս (girl guide)  
երու - ոչ կրլ սկաուտ - կազմակերպութիւնը և  
բերել տեղեկագիր մը այդ մասին որ կարենայ  
յարմար բարեփոխումները ընելով ծրագիր մը  
կազմել և գործի սկսիլ անմիջապէս:

Վստահ ենք որ մեր հասարակութիւնը շատ  
համակիր վերաբերում ցոյց պիտի տայ այս ձեռ-  
նարկին՝ հասկնալով անոր կատարելիք կենսա-  
կան դերը մեր ընտանեկան-ընկերական կեանքի  
մէջ:

Երբ կը կազմենք մարդը բնական է որ  
պիտի պատրաստենք անոր յարմար կիւնը, հա-  
ւասարակչութեան օրէնքին պարտադրութիւնն  
է այս և մենք պէտք է հնազանդինք անոր:

Այս մասին մտավախութեան տեղի չը կայ,  
մենք պիտի աշխատինք որ մեր ընտանեկան  
կեանքի մէջ վրդովիչ խաշատումներ առաջ չը  
գան ընդհակառակը ծնողքներ պատիւ համա-  
րին իրենց աղջիկները այդ կազմակերպութեան  
անգամագրելը:

Արդ պիտի խնդրենք մեր յարգելի պաշտօ-  
նակիցներէն որ այս խնդրին շուրջ առ այժմ  
լուրեան համակերպելու բարութիւնը ունենան  
վստահ ըլլալով մեր լրջութեան ու խոհականու-  
թեան վրայ:

Հ. Մ. Ը. Մ.

պութեան կողմէ ներկայացուցիչներ, յոյն պոլ-  
կաուսներու պետք են: Բոլորն ալ զարմանքի  
յառնուած հիացումով մը կը հետեւին մրցում-  
ներուն: Իրաւ է, չէին սպասեր որ արեւելքի  
մարբարոսներուն ճանկը նետուած այս մարտի-  
ոս ժողովուրդը անօրինակ սպանդէն և տան.

ՀԱՅ ՍԿԱՌԻԴՆԵՐՈՒ ՄԵՍ ՏՈՂԱՆՑՔԸ  
ԱՆԳԼ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ ԱՌՁԵՒ

Քիչ վերջը կը հասնի անգլիական զօրքե-  
րուն նորընտիր հրամանատար Զօր. Քրօքըր՝ իր  
թիկնապահներով: Իր անցքին վրայ Հայ-սքա-



Հ. Մ. Ը. Մ. ի ռաբեկան մղիմպիակոս խաղերէն խմբանկար

լանքէն դարձեալ յարութիւն պիտի առնէր այս-  
պէս կենսունակ, այսպէս հպարտ և յաղթական:

ԳԱՒԱՌԷՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Օրուան հանդէսի՝ ներկայ գտնուելու հա-  
մար Հ. Մ. Ը. Մ. ի Ատափաղարի, Իզմիթի և  
Իզմիրի մասնաճիւղերէն ներկայացուցիչներ և-  
կած էին յատկապէս:

Ժամը երկու քուկէսին մրցումները սկսան:

ՆԱԽԱԳԱՀԸ ԿԸ ԺԱՄԱՆԷ

Ժամը Յին իր հետեւորդներով մրցավայր  
կը հասնի Զաւէն Պատրիարք, որ նախագահն է  
Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան  
և Հայ-սկաուտ մը ինք ալ՝ արձանագրուած Հայ  
սկաուտներու շարքերուն մէջ: Իր ժամանումը  
կ'ողջունուի հայկական քայլերդով, և Հայ-  
սկաուտներու ջոկատ մը զինք կ'առաջնորդէ  
պատուոյ պատշգամբ: Խանդավառուած է ին-  
քը, Պատրիարքն ալ, ու կը յայտնէ ինծի թէ  
առջի օր ստացեր է արդէն Հայ արիներու ուխ-  
տը յատկանշող գօտին՝ որուն հանգոյցին կեդ-  
րոնը քանդակուած է Արարատը՝ եղբերուած հայ  
արիներու նշանաբանով. — «Բարձրացի՛ր, բար-  
ձրացի՛ր:»

ութներու ջոկատ մը բարեւի կը կենայ: Զօրա-  
վարը կ'առաջնորդուի Զաւէն Պատրիարքի մօտ  
որուն կը յայտնէ իր խորին գոհունակութիւնը:

«Քնար»ը կը հնչեցնէ անգլիական քայլերգը  
զոր բոլոր հանգիստեսները կ'ունկնդրեն յոտն-  
կայս, իսկ անգլիացի Զօրավարն ու սպաները՝  
բարեւի կեցած, բարեւի կեցած են նաեւ Հայ-  
սկաուտներու բոլոր ջոկատները:

Անմիջապէս կը սկսի տողանցքը: Հայ-սկա-  
ուտներու բոլոր ջոկատները՝ Պ. Գրիգոր Յա-  
կոբեանի առաջնորդութեամբ՝ անթերի անցք մը  
կը կատարեն պատուոյ պատշգամբն առջեւէն՝  
ողջունելով Անգլիացի հրամանատարը և չըջանը  
ընելով մրցավայրին: Անոնց կը հետեւի Սկիւ-  
տարի հայ-սկաուտ օրիորդներու ջոկատ մը՝ որ  
նոյնպէս կ'անցնի հրամանատարին առջեւէն,  
առաջնորդութեամբ Պ. Ջունդ Սմբատեանի:

Զօրավարը իր շնորհակալութիւնն ու շնոր-  
հաւորութիւնը կը յայտնէ և կը մեկնի նոյն  
պատիւներով:

Ե. Ք. Ը. ի պետք Մր. Ճօնս շնորհաւորելէ  
վերջ եղած յաջողութիւնը, հետեւեալ խօսքերը  
չեշտեց. «Աւելորդ կը նկատեմ հոս ձեզի խօսիլ  
կրած տպաւորութիւններուս մասին, ևս պիտի  
խօսիմ այն տեղեր, ուր ձեզի հաւատ նպաստաւոր  
պիտի ըլլայ:»

Յետոյ տեղի ունեցան Հ. Մ. Ը. Մ. ի Սա-  
մաթիոյ մասնաճիւղին շուէտական մարզանքի

# Հ. Մ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

## Ա. ՏԱՐԵԿԱՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

31 Օգոստոս 1919 Կիւսակի  
ԳԱՏԸ ԳԻՒՂ, ԻՆԻՒՕՆ ԳԼԻՒՊԻ ՄԷՋ



Հայկական ողիմպիական խաղերը զորս Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը կազմակերպած էր Գատը Քէօյի Իւնիօն Քլիւպի ընդարձակ դաշտավայրին մէջ՝ կազմեցին իսկապէս հրճուանքի և խանդավառութեան օր մը վազուան մտահոգութիւնը ունեցող բոլոր հոգի-

մասնաւոր դրօշը: Կարգը կը պահպանեն Հայ Սկաուտներու մէկ քանի ջոկատներ:

Օրուան պաշտօնատարները բոլորն ալ իրենց պաշտօնին գլուխն են: Արդէն դաշտին վրայ են կարգադիր մասնախումբին անդամները, դատաւորները, հաշտարարը, ճամբայ հանողը, արձանագրողը, յայտարարողը, ժամ առնողներն ու հսկող բժիշկները: Լուսանկարիչներ՝ զանազան կէտերու վրայ իրենց գործիքները զետեղած՝ կը սպասեն ազդանշանին:

### ՄՐՑՈՐԳՆԵՐՈՒՆ ՏՈՂԱՆՑԻԸ

Ազդանշանը կը տրուի

«Քնար» նուագախումբը՝ որ հանդէսին հա-



Հ. Մ. Ը. Մ. ի սարեկան Ողիմպիական խաղերէն խմբանկար

ներուն համար, ու զրկանք մը ամէն անոնց համար որոնք չէին ուզած զննել իրենց հանգիստն ու հանոյքը...

### ՄՐՑԱՎԱՅՐԸ

Ժամը երկուքն է և արդէն բազմութիւնը կը յորդի: Լեցուն են պատուոյ պատշգամբ, երկու յարակից ամփիթատրոնները, ինչպէս նաև դաշտին հանդիպակաց ամփիթատրոնը՝ ուր հանդիսականներու հետ տեղ գրաւած են նաև որբեր: Դաշտը եզերող վանդակներուն շուրջ ալ հանդիսատեսներու բազմութիւն մը խռնւած է:

Մրցավայրին վրայ կը ծածանի հայկական եռագոյնը, իսկ անգլիական դրօշը պատուոյ պատշգամբին վրայ, Ասկէ դատ մրցավայրի մուտքի դուռը կը զարդարէ Հ. Մ. Ը. Մ. ի

ճելի նօթերէն մէկը կը կազմէր՝ կը սկսի Բամբ ուրոսանը հնչեցնել և ահա օրուան մրցորդները սողանցք մը կը կատարեն՝ ընդհանուր ծափերու մէջ: Բոլորն ալ գրեթէ միօրինակ հագուած են՝ կուրծքերնուն վրայ ունենալով իրենց թիւն ու իրենց մասնաճիւղը խորհրդանշող գոյնը:

### ՕՏԱՐ ՀԻՒՐԵՐԸ

Անգլիացի բազմաթիւ զինուորներ արդէն տեղ բռնած են ամփիթատրոններուն մէջ: Հետըզհետէ կը հասնին սպաներ ալ հարիւրապետի և հազարապետի աստիճանով՝ որոնք կ'առաջնորդուին պատուոյ պատշգամբ: Ներկայ են նաև անգլիացի ոստիկանապետ Մ. Լաֆօնթէն, Ե. Ք. Ը. ի Արեւելքի մարզական պետը Մ. Ճօնս և Փրանս. պոյ-սկաուտներու շէ կազմակեր-



Հ. Մ. Ը. Մ.ի սարեկան Ողիմպիական խաղերէն խմբանկար

փորձերը՝ առաջնորդութեամբ Պ. Զարեհ Սա. րընանի, ներկաներուն խանդավառ ծափերուն մէջ: Հազիւ մէկ քանի ամսուան վարժութիւն տեսած այդ պատանիներուն և մանուկներուն ցոյց տուած այդ քան յաջող արդիւնքը իսկապէս որ միտարարական էր: Մասնաւորապէս մարզանքներու կշռական գեղեցկութիւնը և մասնակցող փոքրիկներու համակրելի շարժումները յառաջ բերին անօրինակ խանդավառութիւն:

ՄՐՏԱՆԱԿՍԲԱՆԻՈՒԹԻՒՆԸ

Մրցանակներու բաշխումը անդի ունեցաւ Զաւէն Պատրիարքի ձեռքով: Առաջին, երկրորդ և երրորդ հանդիսացողները կարգով ստացան իրենց միտալները: Պատրիարքը այս առթիւ հակիրճ խրատական մը խօսելով դրուատեց սկսած այս շարժումը որ կը ձգտի մեր պատանեկութիւնը պատրաստել մարմնով և նկարագրով և պատիւ համարեց իրեն՝ շարքերուն մէջ գտնուիլ հայ-սկառուաներուն, որոնք պիտի ըլլան վաղուան տիպար Հայերը:



Հ. Մ. Ը. Մ.ի սարեկան Ողիմպիական խաղերէն խմբանկարներ

Օրուան լաւագոյն մրցորդը նկատուեցաւ Ս. Աարէլեան (Գառքէօյ), որ շահած էր եք առաջին մրցանակ: Վերջը կուգային Պ. Վարազ Փողարեան (Վասիր) և Գ. Բէշիշ-ճա (Բերա), որոնք ստացան երկու առաջին և մէկ երկրորդ մրցանակ: Նախորդ չորս ողիմ կաններու մրցանիչներէն եօթը կտարուեցաւ բրակի օրուան մրցումներուն մէջ:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Բերայի մասնաճիւղը շահած էր ընդ ամէնը 9 առաջին, 5 երկրորդ և 1 երրորդ մրցանակ, Վասիրի մասնաճիւղը 6 առաջին, 7 երկրորդ և 4 երրորդ մրցանակ, Գառքէօյի մասնաճիւղը 4 առաջին, 2 երկրորդ և 4 երրորդ մրցանակ, Գում Իսիրի մասնաճիւղը 1 առաջին և 1 երրորդ մրցանակ, Ատափազարի մասնաճիւղը 1 երկրորդ մրցանակ, Մազրի գիգի մասնաճիւղը 2 երկ, օրդ և երրորդ մրցանակ, Իսկ Մասթիօյ և Պալթա Լիմանի մասնաճիւղը մէյմէկ երրորդ մրցանակ:

ՇՐՋԻԿ

Մրցումներու արդիւնքի մանրամասն տեղեկագիրը յաջորդ թիւով պիտի տանք:

Խմբ. «ՀԱՅ ՍԿԱՌԻՏ»

Ա Թ Լ Է Թ Ի Չ Մ

Ա. ՄԱՐԶԱՆՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ԻՆՉ Է ՄԱՐԶՈՒԻԼԸ

Մարզուիլ՝ ձեւակերպուիլ, պատրաստուիլ ըսել է: Բայց ի՞նչ է ձեւը: Ձեւակերպուած Արշիբը այն է որ կը գտնուի ֆիզիքական և բարոյական այնպիսի պայմաններու ներքեւ, որ իր ընդգրկած սքօրներուն մէջ՝ նուազագոյն ճիգով, բարձրագոյն արդիւնքներու կը տիրանայ:

Ուրեմն Արշիբի մը համար ձեւը բարձրագոյն արդիւնք մը յառաջ բերելու կարողութիւնն է: Մարզանքը, մարմնոյն լաւ ձեւ մը ստալու գիտութիւնը ըլլալով, կարելի է կոչել աւազոյն արդիւնք մը ձեւով բերելու կամ բարձրագոյն յաջողութեան գիտութիւնը:

Մարզուելու գիտութիւնը ծայր աստիճան բարդ է. եթէ կարգ մը ընդհանուր սկզբունք-

ներ առ հասարակ կը պատշաճին բոլոր սքօրներու մարզանքներու, միւս կողմէ կարելի է ըսել թէ՛ իւրաքանչիւր սքօր ունի, նոյնիսկ իր գիտական առումէն անկախ, ինքնայատուկ պատրաստութեան եղանակները:

Այս գիտութիւնը մեզ՝ Հայերուս համար, մինչեւ ցարդ անձանօթ մնացած ըլլալով, կ'արմէ պահանջուած լրջութեամբ զբաղիլ անով:

Երկար տարիներէ ի վեր մեր մէջ աթլէթիկ խաղերը մուտք գտած են, չնորհիւ մեր ընական, բարոյական և ֆիզիքական յատկութիւններուն, առանց անոնց միացնելու բանաւոր, խորհուած պատրաստութեան չըջան մը, որքան որ նախնական ձեւի մը տակ ըլլայ ան:

Ներկայ մեր յետամնաց վիճակը երբէ՛ք յուսահատեցուցիչ չի կրնար ըլլալ, զոր պայմաններու գլխիկոր ստրուկներ էինք: Բայց ապագային համար կարելի է պատրաստուիլ ու կ'արժէ որ զբաղինք մեր ձիրքերը յաջողութեան պատկանելով զարդարել խոստացող մարմնակրթական պատրաստութեան գիտութիւնով: Միջազգային Ողիմպիական խաղերու հրաշալի արդիւնքները կը պոռան թէ՛ գիտական ու առողջապահական պատրաստութիւն մը որքան օգտակար կ'ըլլան արշիբի մը համար:

Ինչու ուրեմն մենք ալ չունենանք մեր յաջող աթլէթները, որոնք թէ՛ իրենց տոկուն մարմնոյն և թէ՛ պատկանած ազգին փառքն ըլլան: Ինչո՞ւ չհետեւինք նոյն այն օրէնքներուն և պայմաններուն, որոնց չնորհիւ քաղաքակիրթ տէրութիւններ կը պարձենան իրենց արշիբներովը: Միայն կամքի պէտքը կայ. եթէ այս վերջինը կը պակսի մենէ, անօգուտ է այս խնդրով զբաղիլը. պէտք չէ փորձենք նետուիլ սքօրական պայքարներու մէջ, որովհետեւ անօրթագաւորութեան սահմանը կամքի անպարտելի ոյժն է:

Յաջողաբար պիտի խօսինք թէ՛ ինչո՞ւ մինչեւ այսօր կարող աթլէթներ չենք ունեցած, և ապագային սքօրի մէջ յաջողելու համար ի՞նչ միջոցներու պէտք է դիմենք:

ՎԱՀՐԱՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Հ Ա Յ Ա Ր Ի

Երեսիդ նետեցին

- Ստուկ, ոչխար բառերը:

Դուն այդ թուքը կլող չես, Հայ Արի, վերցո՛ւր երեսիդ նետուած կարմիր ձեռնոցը. բարձրացի՛ր Արարատեան վէտութիւնով, բարձրացո՛ւր կոխտ պատիւը Մայր Հայրենիքիդ:

Յուցո՛ւր թէ դուն սերունդն ես Տրդատներու՝ որք Հռոմի կրկէսները պակուցին. Արշակներու՝ որ Շապուհներ դողացուցին:

Ճշդէ որ դուն ես հայրն ու նոր ծնունդը Դայլ Վահաններու, Դաւիթ-Մհէրներու, Սասունցի Յովնաններու եւ նոր Դաւիթ-Բէկերու, Անդրանիկ-Մուրատներու:

Փաստէ՛ որ դո՛ւն զրկած ես հին Բիւզանդիոնի ծիրանի գահին՝ քսանեակ հայ կայսրեր. ուս ձարերուն՝ մեծ զօրավարներ:

Վերցո՛ւր ձեռնոցը, բարձրացի՛ր Աւարայրի, Չէլթունի, Սասունի եւ Վասպուրականի. Երեւանի ու Արարայի դրօշն ափիդ մէջ, բարձրացո՛ւր դրօշը հայ անկախութեան, տնկէ՛ Արեւելքի նոր Եռագոյնը անխնազարդ Հայ Դրախտին մէջ:

Դո՛ւն ես, Մանուկ Հայ, Պատանի՛ Հայ, Երիտասարդ Հայ, դուն ես զոր բնիկն ու նոր բաղաբացին՝ վերածնող Հայ Աշխարհին:

Դո՛ւն ես նոր քուրմը՝ Ազատութեան խորանին, բարձրացի՛ր հայ բազինին վրայ, բարձրացո՛ւր նոր Հաւատամքի սկիհը, — Առէ՛ք կերէք՞ի ողջոյնը թրթռացուր ժիր Արիներուդ հազագովը:

Պարզէ՛ նոր խաչվառդ, Հայ Արի, մեծ է թափօրդ. բարձրացի՛ր խմբովին. բարձրացո՛ւր ազգովին՝ Հայ Միտքն ու Մարմինը:

Նաւասարդեան օրերն ու Մետրոպեան փեթակները թող ճանանչեն, բզզան՝ հայերէն մեղեդիով:

Բարձրացի՛ր, ինչպէս ոչ մէկը բարձրացած է. բարձրացո՛ւր ինչպէս ոչ որ կրցած է բարձրացնել:

Արարատը բեզ օրինակ, Արամեան հնութիւնդ բեզ խթան, անմահ Ազգի զաւակ ես դուն Հայ Արի:

ԶԵՐՑՈՒՆԻ

Մեր արտասահմանի եւ երկրի մարտական եւ սկաուսական կազմակերպութիւնը:


Այն տեղեր ուր կան կազմակերպութիւններ և միութիւններ որ կ'զբաղին սրօրի Սկաւան և Մարմնամարզական կազմակերպութիւններով թող հաճին իրենց ծրագիրը և կազմակերպութեան ներկայ վիճակի մասին տեղեկացնելու մեզ որ եթէ կարելիութիւն և յարմարութիւն կենայ համագործակցութեան մը համահասկացողութեան զանք և միշտ կապ պահեն միութիւններու մէջ, մենք ամենայն սիրով կ'զրկենք իրենց մեր ծրագիրը և ուզուած տեղեկութիւնները:

Նոյնպէս պիտի խնդրենք որ բարի ըլլան մեր թերթը տարածելու մասին:

Մենք գոհ պիտի ըլլանք եթէ մեզ զրկուին թղթակցութիւններ մրցումներու և այլ մարզական խաղերու վերաբերեալ. սիրով կ'հրատարակենք զանոնք ինչպէս և մեր թերթին ուղղութեան համաձայն ու է գրութիւն:

Մենք սիրով պիտի պատասխանենք մեր ծրագրի սահմանին մէջ եղած դիմումներու և խնդրանքներու:

Հ. Մ. Ը. Մ.



ԾՐԱԳԻՐ «ՀԱՅ ՍԿԱՍԻՏ» ԹԵՐԹԻ

- Ա. — Խորհրդածութիւններ և ուսումնասիրութիւններ:
  1. Մարմնամշակութեան բաժին (Առողջահութիւն):
  2. Մարմնակրթութեան բաժին (Մարմնամարզ, սրօր, խաղ):
  3. Սկաուտութեան բաժին:
- Բ. — Կենսագրականներ (յիշեալ նիւթերու վերաբերեալ):
- Գ. — Մանախօսութիւններ, տրամախօսութիւններ, թատերագութիւններ, նորավէպեր (յիշեալ նիւթերու վերաբերեալ):
- Դ. — Հ. Մ. Ը. Միութեան գործունէութիւնը:
  1. Կեդրոնը 2. Մասնաճիւղերը:
- Ե. — Դրախօսական:
  2. — Ընթերցողներու Բեմը:
  - Է. — Ինչ կ'ըսեն օտար երկիրներու մէջ:
  - Ը. — Մրցումի նիւթեր:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### ԱՐԺՈՒՄԸ ԳԱՒԱՌԻ ՄԷՋ

ԱՅԻՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱՆ

Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութեան Ա-  
սպարի Մասնահիւղին կողմէ, Կիրակի, 14  
պր. 919. կեսօրէ վերջ ժամը 2ին (ը. ե.)  
ՍԵՐՈՒ ՊԵՂԻԿԻ ԴԱՇԵՐ, ԱՏԱ-ԲԱՊԱՐ:

1. 50 մէքր վազք (մեծերու)
  1. Ռօպէրթ Գասպարեան
  2. Համբար. Պետրոսեան  $7\frac{2}{5}$  երկվ.
2. Ուժով բարձր ցատկել
  1. Պերճ Սէմիզեան
  2. Արամ Սաղաթիելեան 138 սմ.
3. 100 մէքր վազք (փոքրերու)
  1. Ազրիպաս Անուշեան
  2. Արշակ Նազարեան  $16\frac{3}{5}$
4. 100 մէքր վազք (մեծերու)
  1. Արամ Սաղաթիելեան
  2. Ստեփան Անլիեան  $14\frac{2}{6}$
5. Գունս նեկել (7 փլօ 250 կրամ)
  1. Պերճ Սէմիզեան
  2. Գրիգոր Մրսակեան 8,09
6. 400 մէքր վազք
  1. Ստեփան Անլիեան
  2. Համբար. Պետրոսեան  $72\frac{3}{5}$  երկվ.
7. Կեցած երկայն ցատկել
  1. Պերճ Սէմիզեան
  2. Ռօպէրթ Գասպարեան 2,54 մթր.
8. Ուժով երկայն ցատկել
  1. Արամ Սաղաթիելեան
  2. Ռօպէրթ Գասպարեան 4,60
8. Սկաւառակ նեկել
  1. Պերճ Սէմիզեան
  2. Հրանտ Տիգալըլըզեան 26,47 մթր.
10. Չողով ցատկել
  1. Համբ. Պետրոսեան
  2. Արամ Սաղաթիելեան 2,00
11. 1500 մէքր վազք
  1. Արամ Սաղաթիելեան
  2. Ազրիպաս Մետարեան 6 վ. 6 երկվ.

### ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐՈՒ ՅՍՆԿԸ

1. Ալիքսան
2. Արամ Սաղաթիելեան
3. Ազրիպաս Մետարեան
4. Բիւզանդ. Վարդերեսեան
5. Գրիգոր Չուլուեան
6. Համբարձում Գալաճեան
7. Համբարձում Պետրոսեան
8. Հովարտ Գասպարեան
9. Հրանդ Գալփաքճեան
10. Հրանդ Գուրուեան
11. Հրանդ Ստեփանեան
12. Հրանդ Տիգալըլըզեան
13. Յակոբ Անպարլեան
14. Յակոբ Եազըճեան
15. Յակոբ Մկրեան
16. Յակոբ Բարաղամեան
17. Յովհաննէս Վարդուկեան
18. Յովհաննէս Յովհաննէսեան
19. Պերճ Սէմիզեան
20. Ռօպէրթ Գասպարեան
21. Վահրամ Ակնցեան
22. Վահրամ Դաւիթեան
23. Վահրամ Սէմէրճեան

### ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐ

- Գասաւորներ
- Պ. Յ. Աթանասեան
  - Պ. Գ. Ծօլօլեան
  - Պ. Ս. Էրզեան
- Ժամ Բռնողներ
- Պ. Գ. Ծօլօլեան
  - Պ. Հ. Բարսեղեան
- Ճամբայ Հանող
- Պ. Գրիգոր Ծօլօլեան
- Յայտարարող
- Պ. Բենեամին Թաշեան
- Արձանագրողներ
- Պ. Յարութիւն Աթանասեան
  - Պ. Բենեամին Թաշեան
- Գասաւորներ
- Պ. Յարութիւն Աթանասեան
  - Պ. Ստեփան Միսկճեան





**ԼՈՒՐՆԵՐ**

**ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

Անցած երեքշաբթի 7 հոկտեմբերին Անգլիական Սկաուտներու կեդրոնական կայանին մէջ տեղի ունեցաւ սկաուտական միջազգային ժողով մը, նախագահութեամբ Անգլիացի սկաուտներու Արեւելի պետ Մր. Սիմի ներկայ էին Անգլիացի, Ամերիկացի, Ճրանսացի, Ռուս, Յոյն ներկայացուցիչներ Հայերն ալ մասնակցեցան իրենց երեք ներկայացուցիչներով:

Ժողովին մէջ խնդրոյ նիւթ եղաւ Սկաուտութեան ոգին և նպատակը: Տարբեր ազգութիւններու սկաուտական կազմակերպութիւններու իրարու հետ ներդաշնակ և համախոհ գործելու կարելորութիւնը շեշտուեցաւ:

Մեր ներկայացուցիչները համակիր ընդունելութեան արժանացան: Որոշուեցաւ ամէն ազգէ ներկայացուցիչներ ընտրել միայուն կերպով ժողովներու մասնակցելու համար:

Հ. Մ. Ը. Մ. ի կողմէ ընտրուեցան Պ. Պ. Արտաշէս Գալանօզեան, Ժիրայր Աօրասունեան և Գրիգոր Յակոբեան:

**ՏԻՐ**

«ՀԱՅ ՍԿԱՌԻՏ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ իր ժամանաւոր շնորհակալութիւնը կը յայտնէ այն բարեացակամութեան համար որով պատրաստակամութիւն յայտնեցին մեզի աջակցիլ զբաւոր կամ բարոյական կերպով հետեւեալ յարգելի Անձնաւորութիւնները:

Տիկ. Զարուհի Գալէմբարեան, Պ. Պ. Տօքթ. Վ. Թորգոմեան, Տօքթ. Ս. Ուզունեան, Բիւզանդ Կէօզիւպէօյիւքեան, Վահան Զերազ, Շահան Պէրպէրեան, Տ. Զիթունի, Տօքթ. Գարրիէլ Սուրեան, Տօքթ. Նաւասարդ Տէլիրմէնճեան (Ատաբազար), Աբամ Նիկողոսեան, Վահրամ Փափազեան, Յակոբ Գրիսեան, Մկրտիչ Պարսամեան, Վահան Սիրունեան:

**ՆԱՄԱԿԱՏՈՒՓ Հ. Մ. Ը. Մ. Ի**

ԲէժՕԹԱՀԻԱ. — Ժամանակին հաճոյքով ստացանք ձեր նամակը, մեր կամքէն անկախ պատճառով չը կրցանք պատասխանել: Մտտօրէն:

ՌՕՏՕՍԹՕ. — Զեր 13 Հոկտ. թիւին պատասխանած ենք:

ԻԶՄԻՏ. — Ստացանք Զեր 9 թուակիրը. կը պատասխանենք:

ԱՏԱՆԱ. — Դեր-հազարապետ Պ. Թատացանք Զեր 7 թուակիրը, չ. թիւն Զեր բարեացակամութեամբ Մտտօրէն կը պատասխանենք և

ՊԱՐՏԻԶԱԿ. — Ստացանք Զեր 14 թ պատասխանեցինք մէկ մասին:

ՍԿԻՏԱՐ Ի մասնաճիւղ. — Ստացանք թուակիրը. կ'սպասենք:

ՎՈՍՓՈՐ Ի մասնաճիւղ. — Ստացանք Զեր թուակիրը. կ'սպասենք:

Պ. ՎԱՀԱՆ, ԶԵՐԱԶ. — Ստացանք Զեր 15 թուակիրը, չնորհակալութիւն Զեր բարեացակամութեան համար:

ԳՈՒՄ ԳԱՓՈՒ, ՍԱՄԱԹԻԱ, ՄԱԳՐԻ ԳԻՒԴ ԳԱՏԸ ԳԻՒՂ, ՊԱԼԹԱ ԼԻՄՈՆ ԱՏԱԲԱԶԱՀ. Մ. Ը. Մ. ի մասնաճիւղեր. Ստացանք ձեր նամակները և տեղեկագիրները:

Միւս մասնաճիւղերը թող հաճին փութաջընել իրենց տեղեկագիրները:

**ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ**

Պ. ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆ մէկ տարուս «Հայ Սկաուտ» կը նուիրէ Արնալուտ գիւղ որրանցին:

Պ. ՕՆՆԻԿ ԳԱՐԲԻՆԵԱՆ մէկ տարուս «Հայ Սկաուտ» կը նուիրէ Մալկարայի Ազգ վարժարանին:

**ՍՏԱՅԱՆՔ**

**ԶԻԹՈՒՆԻ**

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽԱՂԱՇԽԱՐՀԻ Բ. հատորին երկու պրակները: Ամէն ընտանիք թող գնէ սոյն գրքէն կթէ կ'ուզէ որ իր զաւակները պարկեշտ և տոճիկ խաղերով զբաղին: Գին 15 դր. պրակը:

ՈՍՏԱՆ. — Կիսամտեայ պարբերագիր արուեստներու, գրականութեանց և գիտութեան մեր կարելորագոյն պակասներէն մին լրացնէ այս պարբերագրով Պ. Միքա. Շամտանճեան: Գին 20 դր.: Իերա, Գարիսթան փողոց, թիւ 37. սենեակ թիւ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Պ. ՏԵՐԱՄԻՆ. — Երեք հատորի գին 2 ոսկի չ. գինով կարելի է տիրանալ ու պեղծ 5 տարուան անցուղարձերուն, 5 շաբա ամէն մարդ թող ունենայ իր մատենադրանին մէջ և գործուսուցանին վրայ:

Կէս թիւ 12